ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» «Մարտի» 2024 թ. № 37-Ն

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրության օրինակելի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների վերաբերյալ արձանագրությունը տրամադրելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/22/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«22» Մարտի 2024թ.

ք. Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թ. Մարտի «23»-ի № 87- Ն հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

_____ _____ «____» - ին _____-ին
տարի ամիս օր ժամ

Ես՝ _____

_____
պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը, արձանագրության կազմման վայրը

կազմեցի իրավախախտման վերաբերյալ սույն արձանագրությունը «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի_____հոդվածի(ով)_____մասի(ով)_____կետի(ով)_____ենթակետով նախատեսված

_____
կենդանատեսակի կամ բուսատեսակի անվանումը կամ այլ

պատճառված վնասի հիմքով:

1. Իրավախախտումը կատարելու վայրը _____
անտառպետություն, անտառամաս, տեղամաս, պահաբաժին

2. Իրավախախտման վայրի տեղադիրքը

	կոորդինատներ	
Հ/Հ	X	Y
1		
2		
3		
4		

3. Իրավախախտման էությունը (նկարագիրը) _____
_____
_____
_____

4. Ում կողմից է հայտնաբերվել իրավախախտումը _____

5. Իրավախախտ կազմակերպությունը կամ իրավախախտը _____

_____

կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը, անձը հաստատող փաստաթուղթ, պաշտոնը, հեռախոս, էլ. փոստ

6. Իրավախախտից վերցված գործիքների և նյութերի տեսակն ու քանակը և ում է ի պահ տրվել _____

_____

անունը, հայրանունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը

7. Իրավախախտի բացատրությունը _____

_____

_____

ստորագրությունը

8. Արձանագրությունը կազմելուն մասնակցած անձանց բացատրությունը _____

_____

_____

ստորագրությունը

9. Արձանագրությունը կազմողի ստորագրությունը _____

10. Արձանագրության օրինակը ստացա _____

_____

իրավախախտի ստորագրությունը, օր, ամիս, տարի

11. Արձանագրությունն ստանալուց և ստորագրելուց հրաժարվելու մասին նշում _____

_____

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թ. մարտի «22»-ի № 87- Ն հրամանի

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության (այսուհետ՝ Օրենսդրություն) խախտումների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն) կազմվում է անմիջապես խախտման հայտնաբերման վայրում՝ 2 օրինակից:

2. Արձանագրության մեկ օրինակը տրամադրվում է իրավախախտին, իսկ մյուս օրինակը, արձանագրությունը ստացած լինելու վերաբերյալ իրավախախտի կողմից կատարված գրառմամբ, պահվում է տարածքային ստորաբաժանումում և գրանցվում համապատասխան մատյանում: Իրավախախտման վերաբերյալ կազմված արձանագրությունների հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը սահմանվում է էկոպարեկային ծառայության պետի (այսուհետ՝ Ծառայության պետ) հրամանով:

3. Իրավախախտում կատարած և արձանագրությունն ստորագրելուց և ստանալուց հրաժարված լինելու դեպքում, արձանագրություն կազմած համապատասխան ստորաբաժանումը 5-օրյա ժամկետում պատշաճ ծանուցմամբ իրավախախտին է ներկայացնում կազմված արձանագրության օրինակը:

4. Կազմված արձանագրության պատճենը, իսկ արձանագրությունն ստանալուց հրաժարված լինելու դեպքում՝ նաև իրավախախտին արձանագրությունը պատշաճ ծանուցմամբ առաքված լինելը հավաստող համապատասխան փաստաթղթի պատճենը 5-օրյա ժամկետում ներկայացվում է Ծառայության պետին:

5. Իրավախախտի անձը պարզված չլինելու դեպքում՝ տարածքային ստորաբաժանման կողմից ձեռնարկվում են միջոցներ՝ իրավախախտի անձը պարզելու ուղղությամբ, իսկ ձեռնարկված միջոցների արդյունքում իրավախախտի անձը պարզելու դեպքում՝ տարածքային ստորաբաժանումը 5-օրյա ժամկետում պատշաճ ծանուցմամբ իրավախախտին է ներկայացնում կազմված արձանագրության մեկ օրինակը, իսկ արձանագրության մյուս օրինակը և արձանագրությունն իրավախախտին պատշաճ ծանուցմամբ առաքված լինելը հավաստող համապատասխան փաստաթղթի պատճենը ներկայացնում է Ծառայության պետին: